

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL


WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 22 Հոկտեմբեր 2017

Զ ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ /ԹԻԻ 29

SUNDAY, October 22, 2017

**6th SUNDAY OF THE HOLY CROSS/
NO /29**



TODAY'S BIBLE READINGS

Galatians 4:3-18 / Mark 4:14-24 /

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԵՂԻՍԱ Ա. ՔՀՆՅ. ՔԵՐԿԱՆՃԵԱՆ

Հոգևոր Հովիվ

Celebrant:

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

*Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian,
Dn. Norayr Grigoryan*

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian

Choirmaster: Miss Lori Antounian


Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ԳՎԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ 4.3-18

3Նոյնպէս ալ մենք, երբ մանուկ էինք, աշխարհի սկզբունքներուն տակ ստրուկ էինք: **4**Բայց երբ ժամանակը լրումին հասաւ, Աստուած ղրկեց իր Որդին՝ որ կնոջմէ ծնաւ եւ Օրէնքին տակ մտաւ, **5**որպէսզի փրկանքով գնէ Օրէնքին տակ եղողները. որպէսզի մենք որդեգրուե՛նք ստանանք: **6**Եւ քանի որ դուք որդիներ էք, Աստուած ձեր սիրտերուն մէջ ղրկեց իր Որդին Յոգին, որ կ'աղաղակէ. «Աբբա՛, Հայր»: **7**Հետեւաբար ա՛լ ստրուկ չես, հապա՛ որդի. ու եթէ որդի, ուրեմն՝ Աստուծոյ ժառանգորդը Քրիստոսի միջոցով:

8Ուրեմն այն ատեն երբ չէիք ճանչնար Աստուած, կը ծառայէիք անոնց՝ որ բնութեամբ աստուածներ չէին: **9**Սակայն հիմա որ ճանչցաք Աստուած, կամ մա՛նաւանդ՝ ճանչցուեցաք Աստուծմէ, ի՛նչպէս կը վերադառնաք այն տկար եւ աղքատ սկզբունքներուն, որոնց դարձեալ կ'ուզէք ստրուկ ըլլալ: **10**Կը պահէք օրերը, ամիսները, ժամանակներն ու տարիները. **11**կը վախնամ ձեզի համար, որ գուցէ զուր տեղը աշխատած ըլլամ ձեր վրայ:

12Եղբայրներ, կ'աղերսե՛մ ձեզի, ինծի՛ պէս եղէք, որովհետեւ ես ալ ձեզի պէս եղայ. դուք բնա՛ւ վնասած չէք ինծի: **13**Դուք գիտէք թէ ի՛նչպէս՝ մարմինիս տկարութեամբ՝ աւետարանեցի ձեզի առաջին անգամ. **14**բայց մարմինիս վրայ կրած փորձութիւնս չանարգեցիք, ո՛չ ալ պժգացիք. հապա Աստուծոյ հրեշտակի մը պէս ընդունեցիք զիս, Քրիստոս Յիսուսի պէս: **15**Ուստի ո՛ւր է՝ ձեր այդ ատենուան երանութիւնը. քանի որ ես կը վկայեմ ձեզի թէ եթէ կարելի ըլլար՝ ձեր աչքերը պիտի խլէիք եւ զանոնք ինծի տայիք: **16**Միթէ ձեր թշնամի՛ն եղայ՝ ձեզի ճշմարտութիւնը խօսելով: **17**Անոնք նախանձախնդիր են ձեզի հանդէպ, բայց ո՛չ բարի նպատակով. նոյնիսկ կ'ուզեն մեզ վտարել, որպէսզի նախանձախնդիր ըլլաք իրենց հանդէպ: **18**Սակայն լաւ է նախանձախնդիր ըլլալ բարիին հանդէպ՝ ամէ՛ն ատեն, եւ ո՛չ թէ միայն երբ ձեր մէջ ներկայ են:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 4.14-24

14 Յիսուս Յոզիին զօրութեամբ վերադարձաւ Գալիլեա, եւ անոր համբաւը տարածուեցաւ այդ գաւառին ամբողջ շրջակայքը: **15** Ինք կը սորվեցնէր անոնց ժողովարաններուն մէջ, ու կը փառաւորուէր բոլորէն:

16 Երբ եկաւ Նազարէթ, ուր ինք մեծցած էր, իր սովորութեան համաձայն Ճարպաթ օրը մտաւ ժողովարանը, ու կանգնեցաւ որ կարդայ: **17** Տուին անոր Եսայի մարգարէին գիրքը: Երբ բացաւ գիրքը, գտաւ այն տեղը՝ ուր գրուած էր.

18 «Տէրոջ Հոգին իմ վրաս է. որովհետեւ օծեց զիս աղքատներուն աւետարանելու, որկեց զիս կոտրած սիրտ ունեցողները բժշկելու,

19 գերիներուն՝ ազատ արձակում եւ կոյրերուն տեսողութիւն յայտարարելու, հարստահարութիւն կրողները ազատ արձակելու, Տէրոջ բարեհաճութեան տարին յայտարարելու»: **20** Յետոյ գոցեց գիրքը, տուաւ սպասաւորին, ու նստաւ: Բոլոր ժողովարանը եղողները իրենց աչքերը սեւեռած էին անոր վրայ: **21** Ուստի սկսաւ ըսել անոնց. «Այսօր այս գրուածը իրագործուեցաւ, ու ձեր ականջները լսեցին»: **22** Բոլորը կը վկայէին անոր մասին, կը զարմանային անոր բերանէն ելած շնորհալի խօսքերուն վրայ, եւ կ'ըսէին. «Ասիկա Յովսէփի որդին չէ՞»: **23** Ինք ալ ըսաւ անոնց. «Իրաւ դուք ինծի պիտի ըսէք սա՛ առածը. “Բժիշկ, դուն քե՛զ բուժէ: Ո՛րչափ բաներ լսեցինք՝ որ Կափառնայումի մէջ կատարուեցան. հո՛ս ալ ըրէ՛ քո՛ւ բնագաւառիդ մէջ”»:

Galatians 4.3-18

3 Even so we, when we were children, were in bondage under the elements of the world:

4 But when the fulness of the time was come, God sent forth his Son, made of a woman, made under the law, **5** To redeem them that were under the law, that we might receive the adoption of sons. **6** And because ye are sons, God hath sent forth the Spirit of his Son into your hearts, crying, Abba, Father. **7** Wherefore thou art no more a servant, but a son; and if a son, then an heir of God through Christ. **8** Howbeit then, when ye knew not God, ye did service unto them which by nature are no gods. **9** But now, after that ye have known God, or rather are known of God, how turn ye again to the weak and beggarly elements, whereunto ye desire again to be in bondage? **10** Ye observe days, and months, and times, and years. **11** I am afraid of you, lest I have bestowed upon you labour in vain. **12** Brethren, I beseech you, be as I am; for I am as ye are: ye have not injured me at all. **13** Ye know how through infirmity of the flesh I preached the gospel unto you at the first. **14** And my temptation which was in my flesh ye despised not, nor rejected; but received me as an angel of God, even as Christ Jesus. **15** Where is then the blessedness ye spake of? for I bear you record, that, if it had been possible, ye would have plucked out your own eyes, and have given them to me. **16** Am I therefore become

your enemy, because I tell you the truth? **17** They zealously affect you, but not well; yea, they would exclude you, that ye might affect them. **18** But it is good to be zealously affected always in a good thing, and not only when I am present with you.

Mark 4.14-24

14 And Jesus returned in the power of the Spirit into Galilee: and there went out a fame of him through all the region round about. **15** And he taught in their synagogues, being glorified of all. **16** And he came to Nazareth, where he had been brought up: and, as his custom was, he went into the synagogue on the sabbath day, and stood up for to read.

17 And there was delivered unto him the book of the prophet Esaias. And when he had opened the book, he found the place where it was written, **18** The Spirit of the Lord is upon me, because he hath anointed me to preach the gospel to the poor; he hath sent me to heal the brokenhearted, to preach deliverance to the captives, and recovering of sight to the blind, to set at liberty them that are bruised, **19** To preach the acceptable year of the Lord.

20 And he closed the book, and he gave it again to the minister, and sat down. And the eyes of all them that were in the synagogue were fastened on him. **21** And he began to say unto them, This day is this scripture fulfilled in your ears. **22** And all bare him witness, and wondered at the gracious words which proceeded out of his mouth. And they said, Is not this Joseph's son? **23** And he said unto them, Ye will surely say unto me this proverb, Physician, heal thyself: whatsoever we have heard done in Capernaum, do also here in thy country.

24 And he said, Verily I say unto you, No prophet is accepted in his own country.



Ի՞նչ կը նշանակէ Աւետարանը

Աւետարանել կը նշանակէ աւետիս՝ բարի լուր յայտնել: Քանի որ Յիսուս Քրիստոս նոյն Ինքը Մեսիան է, Որը կը սպասէին դարեր շարունակ, ապա խօսիլ Անոր անձի, Անոր խօսքերու, գործերու եւ ողջ տնօրինութեան մասին՝ կը նշանակէր յայտնել փրկութեան եւ երկինքի արքայութեան մասին սպասուող լուրը: Ինքը Քրիստոս եկաւ այս լուրը Իր շուրթներուն՝ ըսելով. «Ապաշխարեցէ՛ք, որովհետև երկնքի արքայութիւնը մօտեցած է» [Մատթ. 3.2]: Այնուհետև Ան իրագործեց այդ Իր կեանքով:



Ովքեր չհաւատացին, անոնց համար Քրիստոսի եւ Անոր հետեւորդներուն վկայութիւնը ու քարոզը չդարձաւ բարի լուր, եւ անոնք անհաղորդ մնացին այդ բարիքին: Իսկ հաւատացողներու համար բացուեցան երկնքի դուռները: Արդարեւ, անոնց համար Քրիստոսի մասին վկայող խօսքը բարի լուր է եւ աւետիս:

Աւետարաններ, այսինքն՝ Քրիստոսի երկրային կեանքին վերաբերող պատմութիւնները եւ Անոր վարդապետութեան հիմնական դրութիւնները պարունակող գիրքեր, շատ եղած են: Սակայն անոնցմէ ոչ բոլորը հաւաստի էին: Ուստի Եկեղեցիի հայրերը Սուրբ Յովհաննէսի առաջնորդութեամբ ընտրեցին այն 4 գիրքերը՝ Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի Աւետարանները, որոնցմով կը սկսի Նոր Կտակարանը: Ինչպէս անոնցմէ իւրաքանչիւրը առանձին, այնպէս ալ բոլոր չորսը միասին կը կոչուին Աւետարան:

«Աւետարան» բառը կը գործածուի նաեւ ընդհանուր իմաստով՝ առանց ակնարկելու աւետարանիչի հեղինակութեան: Այդ բառով կ'արտայայտուի վկայութիւնը Քրիստոսի եւ Անոր փրկագործութեան մասին:

Այդ Աւետարանիչները ճշմարտութիւնը մատչելի եւ հասկնալի դարձուցին ժողովուրդներուն:

Ո՞վքեր են Աւետարանիչները

Աւետարանիչները Քրիստոսի այն առաքեալներէն եւ անոնց գործակիցներէն էին, որոնք ոչ միայն խօսքով աւետարանեցին ժողովուրդներուն, այլեւ



գրեցին Աւետարաններ: Անոնք են Մատթեոսը, Մարկոսը, Ղուկասը եւ Յովհաննէսը: Մատթեոսը եւ Յովհաննէսը 12 առաքեալներէն էին, իսկ Մարկոսն ու Ղուկասը՝ 70-աշակերտներուն մէջէն:

Սուրբ Մատթեոս Աւետարանիչը

Մատթեոս աւետարանիչը իր Աւետարանը գրած է Երուսաղէմի մէջ որպէս ականատես եւ վկայ՝ տեղի Եկեղեցիի խնդրանքով:

Գալիլիացի էր, Կափառնայում քաղաքի բնակիչ: Անոր կը կոչէին Նաեւ՝ Ղեւի: Սկիզբէն ան մաքսաւոր էր, այսինքն՝ հարկահաւաք, սակայն երբ Յիսուս կանչեց անոր հետեւելու Իրեն, անմիջապէս գնաց Տիրոջ ետեւէն ու դարձաւ Անոր աշակերտը:

Քրիստոսի համբարձումէն եւ հոգեգալուստէն յետոյ Մատթեոսը երկար ժամանակ կը քարոզէր Իրեաներուն Պաղեստինի մէջ: Այնուհետեւ, հեռաւոր երկիրներ քարոզելու մեկնելէն առաջ, հաւատացեալ Իրեաներու խնդրանքով ան գրի առաւ իր բանաւոր քարոզները: Այսպէս ստեղծուեցաւ անոր Աւետարանը:

Մատթեոս առաքեալի վախճանումի վերաբերեալ ստոյգ տեղեկութիւններ չկան. ոմանք կը պնդեն, թէ ան նահատակուած է Եթովպիայի մէջ, ոմանք ալ՝ Պարթեւաստանի մէջ:

Անոր խորհրդանիշը թեւաւոր մարդն է:

Սուրբ Մարկոս Աւետարանիչը

Մարկոս աւետարանիչը, ըստ աւանդութեան, մեկն էր այն կույրերէն, որոնք բժշկուած էին Քրիստոսի ձեռքով: Եւ այն վերնատունը, որը Յիսուսի եւ Անոր աշակերտներուն համար եղաւ իբրեւ օթեւան եւ աղօթատեղի, կը պատկանէր Մարկոսի ծնողներուն, որոնք, որպէս երախտագիտութեան արտահայտութիւն, այն տրամադրած էին անոնց:

Մարկոսը Քրիստոսէն հետոյ աշակերտած է Պետրոս եւ Պօղոս առաքեալներուն, եղած է անոնց քարտուղարը եւ թարգմանիչը: Պօղոսի հետ շուրջ 10 տարի ան քարոզած է Անտիոք, Կիպրոս, եւ Հռոմի մէջ: Պօղոսի եւ Պետրոսի նահատակութիւնէն հետոյ Մարկոսը մեկնած է Եգիպտոս եւ Ալեքսանդրիայի մէջ հիմնած է Եկեղեցի: Այստեղ ալ նահատակուած է հեթանոսներուն ձեռքով:

Մարկոսը կը համարուի Ալեքսանդրիա արժոյի առաջին եպիսկոպոսը: Աւանդութեան համաձայն՝ ան իր Աւետարանը գրած է Ալեքսանդրիայի՝ մէջ Պետրոս առաքեալի պատմածներուն յիշողութեամբ:

Մարկոս աւետարանիչի խորհրդանիշն է թեւաւոր առիւծը:

Սուրբ Ղուկաս Աւետարանիչը

Ղուկաս աւետարանիչը ծագումով յոյն էր՝ Սիրիայի Անտիոք քաղաքէն: Ան բժիշկ էր, պատմիչ եւ նկարիչ: Աշակերտած է Պօղոս առաքեալին, եղած է անոր հաւատարիմ

գործակիցը: Պողոսի նահատակութենէն յետոյ սկսած է քարոզել նախ Իտալիայի, Գաղղիայի, Դաղմատիայի մէջ, ապա անցած է Մակեդոնիա, որտեղ եւ նահատակուած է:

Համաձայն աւանդութեան՝ իր Աւետարանը ան գրած է Անտիոք քաղաքի մէջ՝ Պողոս առաքեալի քարոզութեան հիման վրայ: Աւանդութիւնը կը պատմէ նաեւ, որ առաջին անգամ Ղուկասը նկարած է Ս. Մարիամ Աստուածածնի սրբապատկերը:

Ղուկասի խորհրդանիշն է թելաւոր ցուլը:

Սուրբ Յովհաննէս Աւետարանիչը

Բնակած էր Բեթսայիդա քաղաքի մէջ եւ կը զբաղուէր ձկնորսութեամբ: Մինչեւ Յիսուսին հետեւիլը կ'աշակերտէր Ս. Յովհաննէս Մկրտչին:

Յովհաննէսը՝ Փրկչի ամենասիրելի աշակերտն էր: Ան էր, որ հետեւեցաւ Յիսուսին Գեթսեմանիյէն մինչեւ Գողգոթա: Խաչի վրայէն Տէրը անո՛ր յանձնեց Իր մօրը՝ սուրբ Կոյս Մարիամին: Հաւանաբար Քրիստոսի հանդէպ այդպիսի բոցավառ սիրոյ և նախանձախնդրութեան պատճառով ալ Աւետարանի մէջ անոր, եղբօր հետ, կը կոչեն Որոտման որդի:

Պետրոսի եւ իր եղբայր Յակոբոսի հետ Յովհաննէս առաքեալը եղած է Երուսաղէմի Եկեղեցիի երեք սիւներէն մէկը: Հետագային անոր գործունէութեան վայրը դարձաւ Եփեսոս քաղաքը, որտեղէն ալ ան կը ղեկավարէր իր հիմնած փոքրասիական 7 Եկեղեցիները:

Տիրոջ կամքով՝ Յովհաննէսը միւս առաքեալներէն աւելի երկար ապրեցաւ եւ խաղաղութեան մէջ ննջեց մօտ 95 տարեկանի մէջ՝ 100 թ.: Երբ ան արդէն շատ ծեր էր, քարոզներուն մէջ շարունակ կը կրկնէր. «Չաւակնե՛րս, սիրեցե՛ք միմեանց»: Երբ անոր կը հարցնէին, թէ ինչու է այդքան յաճախ կ'ըսէր այդ բառերը, կը պատասխանէր. «Այդ Տիրոջ պատուիրանն է: Եթէ սեր ունիք, որեւէ այլ բանի կարիք չէք ունենար»:

Ան՝ գրած է իր Աւետարանը, 3 ընդհանրական թուղթերը եւ Յայտնութիւնը:

Յովհաննէս Աւետարանիչը իր Աւետարանը գրած է 90-ական թթ. Եփեսոս քաղաքի մէջ՝ Ասիայի Եկեղեցիի խնդրանքով:

Անոր խորհրդանիշն է արծիւը:

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ մեր,

Այս առիթով, կը շնորհաւորենք մեր Հայ ազգի զաւակները, որոնք այս անունները կրելու պատիւը ունին: Աստուած անոնց պարգեւէ քաջառողջ երկար տարիներ: Ամէն

Տ. Եղիա Ա. Քհնյ. Քերվանճեան

Յուկտեմբեր 21, 2017


**Ս. Մատթէոս, Մարկոս,
Ղուկաս եւ Յովհաննէս
Աւետարանիչներու
Յիշատակի Տօն**

**Մատթէոսը Տիրոջ 12
առաքեալներէն է, Առաջին
Աւետարանի հեղինակը:
Մատթէոս անունը Յունական է,
այն եբրայերէն Ղեւի անունն է,
որ կը նշանակէ
Աստուածատուր: Ս. Մատթէոսը
Նախապէս Կափառնա քաղաքը
մաքսաւոր եղած էր: Անսալով
Տիրոջ ձայնին՝ ան վաճառած էր
իր ունեցուածքը, բաժնած էր
այն աղքատներուն՝ դարձած**

**Քրիստոսի հետեւորդներէն: Ան Աստուծոյ խօսքը քարոզած է
Պարթեւաստանի եւ Պաղեստինի մէջ:**

**Ս. Մարկոս Աւետարանիչը Բառնաբայի եղբօր տղան էր՝ բնիկ Երուսաղէմցի:
Կը Կոչուէր Նաեւ՝ Յովհաննէս: Անոր մօր՝ Մարիամի տունը, Երուսաղէմի մէջ
առաքեալներու աղօթավայրն էր: Կը կարծեն, որ սա այն Վերնատունն էր, ուր
Յիսուս իր վերջին ընթրիքը կատարած էր, իսկ Յոգեգալուստին՝
քրիստոնէական եկեղեցին հիմնադրուած: Ան եղած է Պետրոս առաքեալի
թարգմանիչը, ինչպէս Նաեւ՝ Պօղոսի եւ Բառնաբասի գործակիցներէն մէկը:
Ս. Մարկոսը ամենակարճ Աւետարանի հեղինակն է: Աստուծոյ
խօսքը քարոզած է Եգիպտոսի մէջ, ուր եւ Նահատակուած է: Ս. Մարկոսը
Ղատի Ուղղափառ Եկեղեցւոյ հիմնադիրն է:**

**Ս. Ղուկաս Աւետարանիչը Երրորդ Աւետարանի հեղինակն է: Ծնած է Անտիոքի
մէջ եւ ըստ աւանդութեան, եղած է Քրիստոսի 72 աշակերտներէն: Պօղոս
առաքեալի վկայութեան համաձայն, մասնագիտուեամբ եղած է բժիշկ: Լսելով
Քրիստոսի քարոզներու մասին՝ եկած է Պաղեստին եւ հետեւած Տիրոջը:
Աստուծոյ խօսքը տարածած է Աքայայի, Լիպիայի, Եգիպտոսի եւ Թերբայի մէջ:
Հռովմայեցի Թեոփիլոսի խնդրանքով գրած է «Գործք Առաքելոց»-ը: Ըստ հին
աւանդութեան՝ Նահատակուած է Թերբայի մէջ:**



Ս. Յովհաննէս առաքեալը Դ Աւետարանի, երեք ընդհանրական նամակներու եւ «Յայտնութեան» գիրքի հեղինակն է: Յիսուս անոր համարած է «սիրելի աշակերտ»: Յիսուս այնքան կը սիրէր եւ կը վստահէր անոր, որ խաչելութեան պահուն Աստուածամօր յանձնեց անոր ինամբը: Մահացած է 100 թուականին, Եփեսոսի մէջ 95 տարեկանին:



2017-10-21

Feast of the Evangelists Sts. Mathew, Mark, Luke and John

Evangelist St. Mathew is one of the twenty apostles of the Lord. He is the author of the first Gospel. The name of Matthew is the Greek version of the Hebrew name meaning God-given. His Hebrew name has been Levi. In the past he has been a tax collector in Capernaum. Then obeying to God's will he has sold his property, distributed the money to the poor and has become on the followers of Jesus Christ. He has preached the Word of God in Parthia and Palestine.

Evangelist St. Mark was the nephew of Barnabas. He was born in Jerusalem. He was named also John. It was the house of his mother – Mary that was the place of prayer for the apostles. It is supposed that it was the place where Our Lord Jesus Christ had the Last Supper and where the Church was founded during the Pentecost. He has been the interpreter of St Peter, as well as the friend of St. Paul and Barnabas. He is



the author of the shortest Gospel. He has preached the Word of God in Egypt, where he has been martyred he is the founder of the Coptic Orthodox Church.

Evangelist St. Luke is the author of the third Gospel. He was born in Antioch. According to the tradition he is one of the seventy-two disciples of Jesus Christ. According to St. Paul he has been a physician. Listening about the Lord's Preaching, Luke goes to Palestine and follows the Lord. He has preached the Word of God in Achaia, Libya, Egypt and Teba. He has written "The Acts of the Apostles" upon the request of Theophilus of Rome. According to the tradition he has been martyred in Teba.


Evangelist St. John is the author of the fourth Gospel, three letters and the Revelation. He deserved the title of the "beloved disciple" of Christ. He was the son of the fisherman Zebedee and the brother of James. He is considered to be one of the two disciples of St. John the Baptist who followed Jesus (See Jn 1:37). Afterwards the Lord called him to Galilee and gave him the authority of apostle. John became one of the closest Disciples of Christ. Together with James and Peter he witnessed the "transfiguration" that came over Jesus while He was praying on a high mountain named Tabor, went to the valley of Gethsemane. Together with St. Mary, Holy Godmother, he stood near the cross and at the moment of crucifixion Jesus asked him to take care of the Holy Mother of God. Together with Peter he was the first who went to the tomb of Christ and later met Him near the Sea of Genneseret (or Sea of Galilee or Lake Kinneret or Lake Tiberias). Later we see him during the persecutions of Christians in Jerusalem and his success in preaching in Samaria. After the descent of the Holy Spirit John went to Asia Minor and settled down in Ephesus where he took care of the churches founded by Paul and wrote down the Gospel there. Roman Emperor Titus Flavius Domitianus (Domitian) exiled him to Patmos where he was given (and recorded) a vision from Jesus. In Patmos or Ephesus he wrote also his letters addressed to the faithful flock.

During the period of reign of Roman Emperor Nero he returned to Ephesus where he passed away in 100 AD, in Ephesus, at the age of 95.



ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 22 Յոկտեմբեր 2017

Տիկ. Սեդա Սարոյեանի եւ զաւակներուն,

Տ. եւ Տիկ. Նազարէթ եւ Նատին Մըխճաւաքեանի

եւ զաւակներուն,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր`

ՅԱԿՈՒ ՍԱՐՈՅԵԱՆԻ

(AGOP SAROYAN)

մահուան 40-ին առիթով

(Սուրճի սպասարկուութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ)



Տիկ. Զուարթ Պըչաքճեանի,

Տիար Ռուբէն Պըչաքճեանի եւ զաւակներուն,

Տ. եւ Տիկ. Ասպետ Պաճաքեանի եւ զաւակներուն,

Տ. եւ Տիկ. Գրիգոր Պասիլի եւ զակիկն,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր`

ԵՐՈՒԱՆԴ ՊԸԶԱՔԾԵԱՆԻ

(YERVANT BECHAKJIAN)

Հոգևոյն ի հանգիստ

Ինչպէս նաեւ՝

ՊԸԶԱՔԾԵԱՆ, ՊԱԼԵԱՆ, ԿԵՕՔԷՕԶԵԱՆ

ԵՒ

ՄԱՔԱՍԾԵԱՆ

Գերդաստաններու համայն ննջեցելոց

հոգիներուն ի հանգիստ





Սիրելի հաւատացեալներ,
Անոնք որոնք կը փափաքին, որ
Հոգեւոր հովիւը այցելութիւն
կատարէ իրենց հիւանդ
ընտանեկան պարագաներուն կամ
հարազատներուն, Եկեղեցոյ Հովիւը՝

Արժ. Տ. Եղիա Ա. Քինյ. Քերվանճեան պատրաստէ
անմիջականօրէն իր այցելութեամբ ընդառաջելու
ձեր փափաքին:

**Հաճեցէք կապ պահել՝ Տէր Հօր հետ
հեռաձայնելով՝ (514) 241-9347 կամ
Եկեղեցոյ գրասենեակ (514) 279-3066**



FAMILY PRAYER

*God made us a family
We need one another
We love one another
We forgive one another
We work together
We play together
We worship together
Together we use God's word
Together we grow in Christ
Together we love all men
Together we serve our God
Together we hope for Heaven
These are our hopes and ideals
Help us to attain them,
O God, Through Jesus Christ
our Lord*

Dear
Parishioners,
If you have
family
members or
relatives that

you wish to have spiritual support, our Pastor
Arch. Fr. Yeghia Kervanjan is ready to fulfill
your wish and visit them, when and where is
needed.

**Please feel free to contact Der Yeghia directly
at (514) 241-9347
or call the secretariat of the Church at (514)
279-3066**





ՏՆՕՐՅՆԷՔԻ ԱԲԱՆԴՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ



Տնօրհներք փափաքող
հաւատացեալները
կրնան հեռաձայնել Տ.
Եղիա Ա. Քհնյ.
Քերվանճեանին՝

(514) 241-9347 կամ

Եկեղեցւոյ գրասենեակ՝

(514) 279-3066

The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.


At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a *nushkhar* as a symbol of the presence of God's blessing.

To request a Home Blessing, please contact with Fr. Yeghia

at (514) 241- 9347 or church office at (514) 279-3066.



Աստուածաշունչի Սերտողութիւն Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ



Եկէ՛ք միացէք մեզի ամէն
Յինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-
ին, մասնակից ըլլալու մեր
հետաքրքրական Աստուածաշունչի
Նիւթերուն եւ ընկերային
միջավայրին:

Աստուածաշունչի սերտողութեան
խումբը՝ ընկերային ջերմ
մթնոլորտի մէջ հաճելի ժամանակ
կ'անցնէ, Տ. Եղիա Ա. Զհնյ.
Քերվանճեանի՝ բժախնդրօրէն
պատրաստած
Աստուածաշնչական նիւթերու
հետաքրքրական ճիւղ
գիտելիքներով:





**Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն,
Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն,
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ
քարտուղարութեան (514) 279-3066, մեր
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



Attention to our beloved parishioners,
**If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.
Thank you for your cooperation.**

Pastor and Parish Council

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹՅՆ ԵԿԵՂԵՅԻՈՅ

DON
À L'ÉGLISE



DONATION
FOR THE CHURCH

*Saint Gregory the Illuminator Armenian
Cathedral of Montreal
Donations of October 2017
have been received with great appreciation*



GENERAL CHURCH:

Mr. Manvel Markosyan \$50.

CHURCH 47th ANNIVERSARY

Mr. Romel Demirdjian \$250.

HOKEHANKISD:

THE MIGIRDIC HAZARABEDIAN

Mrs. Sona Hazarabedian \$500.

KOMITAS CHOIR:

Mr. & Mrs. Oskan & Tanya Hazarabedian \$400.

THE LATE SHAHNUR ARTIN KARAARTINYAN

Mr. & Mrs. Arie & Eugenia Karaartinian \$50.

THE LATE AZAD, DEMIRDJIAN

Mr. Romel Demirdjian \$30.

THE LATE SAAKIAN FAMILY

Mrs. Anna Saakian \$30.



Եկեղեցւոյ Ձեռնարկներ

Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 28 եւ 29, 2017
Համերգ Լին Անոյշ Իշնար – Կիրակի, 26 Նոյեմբեր 2017 երեկոյեան
ժամը 6-ին Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ

Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 3 Դեկտեմբեր 2017

Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 47-րդ Տարեդարձ –
Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017

Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 47-րդ Տարեդարձ –
Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017

Բուն Բարեկենդանի Խրախճանք - Շաբաթ, 10 Փետրուար 2018

UPCOMING EVENTS

Annual Bazaar – Saturday & Sunday- October 28 & 29, 2017

Concert Lynn Anoush Isnar – Sunday, November 26, 2017

at 6:00 pm in St-Gregory the Illuminator Armenian Cathedral

Children's Christmas /CFFA –

Sunday, December 3rd, 2017

Church 47th Anniversary – Sunday, December 10th, 2017

Poun Paregentan Party- Saturday, February 10th, 2018



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի
Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

Կազմակերպությունը՝

ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ



Տ Ա Ր Ե Կ Ա Ն

ՊԱՉԱՐ

Պատույ Հիւր՝

Ազնուափայլ Տիկին Սօնա Տէմիրճեան

Շաբաթ 28 եւ Կիրակի 29 Հոկտեմբեր 2017
Ժամը 10:00-էն

Ձեռային աշխատանքներ

Անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք
Երկու օրերուն՝ ճաշի սպասարկութիւն

Յատկեալ մանրամասնութեան համար հեռաձայնել
Եկեղեցոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին



CONCERT

Under the Auspices of
BISHOP ABGAR HOVAGIMYAN
Primate of the Armenian Holy Apostolic Church Canadian Diocese

Performed by **Famous Soprano**

Lynn Anoush Isnar

Invited from Toronto

ՀԱՄԵՐԳ

Հովանաւորութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ
Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Կատարողութեամբ՝ **Համբաւաւոր Սոփրանօ**

Լին Անոյշ Իշնարի

Հրաւիրուած Թորոնթոյէն

Sunday, November 26, 2017

at 6:00 pm

Կիրակի, 26 Նոյեմբեր 2017

երեկ. ժամը 6-ին

**In St. Gregory the
Illuminator Armenian
Cathedral**

**Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ
Եկեղեցոյ մէջ**

615 Stuart, Outremont, QC H2V 3H2
Tel.: 514 279-3066



Donation \$25
Reserved Seats \$50

Սուտքի նուէր՝ \$25
Թուագրեալ տոմէր՝ \$50





Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի

St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6-12 տարեկան երեխաներու համար

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

Կիրակի, 10 Սեպտեմբեր 2017

SUNDAY SCHOOL

On Sunday, September 10, 2017

For the ages of 6-12 years old children

Երեխաները հաճելի եւ ընկերային մթնոլորտի մեջ կը սորվին Սաղմոսներ եւ երգեր, կը զարգացնեն Հայերէն լեզուն եւ կը ծանօթանան Հայոց Պատմութեան:

Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066

Տէր Եղիա Ա Քհնյ. Զերվանճեանին (514) 241-9347



In a pleasant and friendly atmosphere, the children will learn Psalms & songs, develop Armenian language skills, & introduce to Armenian history.

Fun & fascinating consecutive Fieldtrips

For more information and registration call to the Church office (514) 279-3066

Archpriest Fr. Yeghia Kervanjian (514)241-9347

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjian: (514)241-9347
E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca
Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ԴՊՐԱՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ

Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը

**Կը յայտնեն թէ իսկ սկսած են դպրաց
պատրաստութեան
Հանդիպումները**

**Այն պատանիներն ու երիտասարդները,
որոնք կը փափաքին ծառայել
Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Խորանին եւ մաս կազմել
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Դպրաց Դասին կը
խնդրենք**

**հեռաձայնել՝ Եկեղեցւոյ Հովիւին (514) 241 -9347
Կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066:**

**Հոգեւոր Հովիւ
Տէր Եղիա Ա Քհնյ. Քերվանճեան**

ՄԱՅՐ ՏԱԾԱՐ



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրելի հաւատացեալներ, ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ արդէն իսկ տեղի
կ'ունենան ամէն Հինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին,
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն
ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ
Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն
ու մասնակցութիւնը Եկեղեցւոյ կեանքին մէջ եւ
վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող
հարցումներուն ու մտահոգութիւններուն:

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

S. Եղիա Ա Քհնյ. Բերվանճեան


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միքելի Հասարացեալներ, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.